Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արևիսի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության /11 դասաժամ/, պատմության /7 դասաժամ/, մաթեմատիկա /12դասաժամ/, ֆիզկուլտուրա /7 դասաժամ/, ռուսաց լեզու /11 դասաժամ/, անգլերեն /7 դասաժամ/, ֆիզիկա /2 դասաժամ/, աշխարհագրություն /2 դասաժամ/, ինֆորմատիկա /3 դասաժամ/, կերպարվեստ /3.5 դասաժամ/, տեխնոլոգիա /3 դասաժամ/, երգ /1.5 դասաժամ/,ՀԵՊ/1ժ/ ուսուցչի թափուր տեղերի համար և զինղեկ՝0.5 դրույք: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են նոյեմբերի21-ից մինչև դեկտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ դեկտեմբերի 8-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Արևիսի հիմնական դպրոցում, հասցե՝ գ. Արևիս, փողոց1,շ.12: Տեղեկությունների համար զանգահարել 094374753 հեռախոսահամարով: